11149

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող

Արամ Մեյմարյան

«01» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 231 - 25

Նախաձեռնող՝ «ԼՈՒՔ» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան 23 շենք, 26 բնակարան

Գործունեությունը՝ Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրում դպրոցի կառուցում
Կոտայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 231 - 25

«01» հոկտեմբեր 2025 թ.

Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԼՈՒՔ» ՍՊԸ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Լեռնանիստ բնակավայր

Ներածական մաս. Կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է հիմնական դպրոցի կառուցում Կոտայքի մարզի Հրազդան համայնք Լեռնանիստ բնակավայրում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է: Դպրոցի կառուցապատման համար նախատեսված հողամասը զբաղեցնում է 1. 81962 հա մակերես: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարարական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Դիտարկվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզի, Լեռնանիստ բնակավայրի Հրազդան-Երևան խճուղու 103 հողամասում: Համաձայն նախագծի դպրոցը նախատեսվում է 432 աշակերտի համար, այն նախատեսվում է երկհարկանի նաև նկուղային հարկով, որը ծառայելու է որպես ժամանակավոր թաքստոց-ապաստարան: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ ռեկրեացիոն գոտիներին լուսավորություն ապահովելու համար: Առաջին հարկում տեղակայված են լինելու 10-12 դասարանների 2-ական լսարանները,

գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը, ռազմագիտության կաբինետը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճը՝ իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև թվով 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամների համար: Դպրոցն նախատեսվում է 36.6 մ x 91.5 մ առանցքային չափերով և սեյսմիկ կարով՝ բաժանված 2 հավասար մասնաշենքերի: Միջնորմները նախատեսված են 200 x 400 x 200 թեթև բետոնի բլոկներից՝ համապատասխան ամրանավորմամբ: Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ: Դպրոցին կից նախատեսվում է կառուցել կաթսայատուն: Դպրոցի տարածքում նախատեսվում է տեղադրել 127 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված է 232 հատ միաբյուրեղային 144 (6 x 24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: Դպրոցի նախագծում հաշվի են առնված նաև ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժենարական լուծումները՝ ըստ շինարարական նորմերի:

Դպրոցի կառուցման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- հողամասի ընդհանուր մակերես՝ 18192 քմ,
- կառուցապատման մակերես՝ 3576.9 քմ,
- կանաչապատման մակերես՝ 11718,1 քմ,
- անջրանցիկ մակերես՝ 2897 քմ:

Նախագծման լուծումներում մեծ ուշադրություն են դարձված հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ խմբերի տեղաշարժն ապահովող և այլ հարմարեցված լուծումներին (թեքահարթակներ, հարմարեցված սանհանգույցներ և այլն): ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ: Շենքի տանիքն իրականացվելու է հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Դպրոցն ապահովված է լինելու հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով և այլն:

Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին դպրոցի տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ, համաձայն որի կառուցապատումից ազատ մնացած տարածքները կբարեկարգվեն և կկանաչապատվեն: Դպրոցի տարածքի կանաչապատման աշխատանքների նախագծումն իրականացվել է հաշվի առնելով ՀՀ Կառավարության N 108-Ն (2018 թ.) որոշմամբ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային

աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Շինարարության ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատվելու է, շինությունների ծածկում անթափանց թաղանթով՝ համապատասխան բարձրության, շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացվելու է ջրցան, պարբերաար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը՝ կարգավորելու նպատակով, շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը իրականցվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, իրականացվելու է շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստները ծածկվելու է համապատասխան բարձրությամբ թաղանթով: Ջրցանի ծավալները պետք է հաշվարկվելու է այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար, շինարարական հրապարակում նախատեսվում է նաև հարթակ տեխնիկայի լվացման համար, նախքան շինհրապարակից ելքը իրականացվելու է տեխնիկայի անիվների և արտաքին հատվածի վրա բետոնային մնացորդների լվացում, որոնց ջրերը հավաքվելու են հարևանությամբ նախատեսվող պարզարանում: Նստեցումից հետո ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման և այլ հնարավոր նպատակներով, իսկ հատակի նստվածքը պարբերաբար կհեռացվի շինհրապարակից շինարարական աղբի հետ: Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են՝ շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա, հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N1404 որոշմամբ: Կառուցապատման աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ազդակիր համայնքում (Լեռնանիստ բնակավայր) անցկացվել է հանրային լսում, որի ընթացքում բնակիչները կողմ են արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ՝ նշելով դպրոցի կառուցման կարևորությունն իրենց համար:

Նախաձեռնողը պարտավորվել է շինարարության ընթացքում իրականացնել շրջակա միջավայրի վրա առաջացող բացասական ազդեցությունները բացառող կամ նվազագույնի հասցնող լրացուցիչ միջոցառումներ: Նախատեսվող գործունեության ընթացքում մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումներն իրականացվելու են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջների պարտադիր կատարմամբ: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով հողի բերրի շերտի հետ կապված աշխատանքներն իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել ընկերության կողմից հաշվետվությունը լրամշակելիս: Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Նոր դպրոցի կառուցումը հնարավորություն կտա աշակերտների ուսուցումը կազմակերպել ավելի որակյալ, անվտանգ՝ բարձր սեյսմակայունություն ունեցող, բարեկարգ, ժամանակակից չափորոշիչներով հագեցած շենքում:

Փորձաքննական պահանջներ

Կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը՝

1. Շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (տարածքի ցանկապատում, շենքերի և շինությունների ծածկում համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով, օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում լրացուցիչ միջոցառումների իրականացում, շինաղբի և շինարարական նյութերի պահում և տեղափոխում անթափանց ծածկոցով և այլն):

2. Շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի կանաչապատում և բարեկարգում՝ Հրազդան համայնքի հետ համաձայնեցված կանաչապատման բարեկարգման նախագծի համաձայն՝ տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ դրանց հետագա պարտադիր ոռոգմամբ և խնամքով և ապահովել նախագծման թույլտվությունում և հաշվետվությունում ամրագրված կանաչապատման մակերեսը:

3. Շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել

«Թափոնների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով (բացառել թափոնների և շինարարական աղբի կուտակումները հարակից տարածքներում):

4. Ապահովել հաշվետվությամբ ներկայացված բոլոր բնապահպանական և մշտադիտարկումների միջոցառումների իրականացումը (օդի որակ, հողային և ջրային ռեսուրսների պահպանություն, աղմուկի և թրթռումների մակարդակ, շահագործվող տեխնիկայի պատշաճ տեխնիկական վիճակ և այլն):

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԼՈՒՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան